



Մ Ի Յ Ն

ՀՈՐՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻ 7.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ՅՈՒՆԻՍ 31.
1869.

ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

Խ Ն Դ Ի Ր

Ա Բ Ա Ջ Ն Ո Ր Գ Ա Կ Ա Ն

Ղրապետ Եր Իրեւ զարար զմուտ
Յիսուսի Գրիստոսի. Բ. ՏԻ. Բ. Զ.
Եթէ ամենաքե եղբարցն հիանալով թիւն
քեզ ոչ քաւ ե. մի վեկը առաջնորդ. ԵԶՆԻԿ

ՍԻՅՆԻ նախընթաց թուոյն մէջ
կաթողիկոսական խնդրոյն վրայ խօսե-
լով խոստացանք խօսիլ նոյնպէս առաջ
նորդական խնդրոյն վրայ: Կատարենք
մեր խոստումը:

Առաջնորդութիւնը, ընդհանրա-
պէս առնելով, շատ պարտաւորու-
թիւններ կը պարունակէ իրեն մէջ և
համարեա թէ ամեն կարգի անձանց
կը վերաբերի, այն է՝ Թագաւորի, զօ-
րապետի, հեղինակի, դաստիարակի,
ճնողի, հովուի և այլն: Վասն զի, թաւ

գաւորը առաջնորդ է հպատակաց,
զորապետը՝ զօրաց, հեղինակը՝ ընթեր-
ցողաց, դաստիարակը՝ աշակերտաց,
ճնողը՝ զուսակաց, հովուը՝ հօտին կամ
ժողովոգեան, և այլն: Եւ այնքան պի-
տի խօսիմք առաջնորդութեան մաս-
նաւոր նշանակութեան վրայ, այսին-
քէն եկեղեցական առաջնորդութեան
վրայ:

Եկեղեցական առաջնորդութիւնը
կամ վիճակաւորութիւնը, որով կ'ի-
մանանք հազուար կամ բարոյական

տեսչութիւն մի ընդարձակ վիճակի ժողովրդեան վրայ, սխաւած է Քրիստոնէութեան հետ, ինչպէս և կը կարգանք Պողոսի առ Տիմոթէոս գրած թղթերուն մէջ։ Իայց Քրիստոնէութեան նոր տարածման ժամանակ առաջնորդութեան շրջանը շատ ընդարձակ չէր. իսկ յետոյ որքան որ քրիստոնէից թիւն բազմացաւ, այնքան ևս առաջնորդութեան սահմանը ընդարձակեցաւ։ Ըյս իրողութիւնը աւելի յայտնի է վաղեմի յունա-հռոմէական եկեղեցւոյ պատմութենէն։ Երբ Անծն կոստանդիանոս իւր կայսերութիւնը բաժանեց չորս մեծ կուսակալութեան (Préfecture), եկեղեցական վարչութիւնը ևս օրինակ առնելով բաժանեց իւր տնտեսութեան ծանրութիւնը։ Չորս կուսակալութիւնք կը պարունակէին իրենց մէջ թեմեր կամ շրջաններ, թեմերը՝ եպարքոսութիւններ, եպարքոսութիւնքը՝ քաղաքներ և աւաններ։ Եկեղեցին ևս, ըստ օրինակի քաղաքական բաժանման, թեմերու կամ շրջաններու մէջ կարգեց էքզարք կամ եպիսկոպոսապետ, եպարքոսութեանց մէջ մետրապօլիտ կամ արքեպիսկոպոս, քաղաքաց մէջ եպիսկոպոս, և գաւառաց մէջ քորեպիսկոպոս։

Այնպէս շատ անգամ մէջ կուսանդեան կայսերութեան ընդարձակ նշանակութեամբ բաժանումներ եղած չեն։ Այն բոլոր պատմագրաց մէջ միայն Յովհաննէս կաթողիկոսն երեք մետրապօլիտութեան անուն կը յիշէ՝ Աբաստիոյ, Անտիոնեաց և Սարտիսոսաց քաղաքի. իսկ Օրբելեան կը յաւելուր Արևնեաց աշխարհի մետրապօլիտութիւնն եւս։ Իայց մեր ազգային միւր պատմագիրներն առհասարակ եպիսկոպոս կամ տեսչ չառնաւանքն կիր առած են, ինչպէս

եպիսկոպոս Բագրեանդայ, եպիսկոպոս Արևնեաց, և այլն, որով պիտի հասկնանք նոյն տեղւոյն առաջնորդը կամ վիճակաւորը. և յայտնապէս կերևի որ առաջնորդական տեսչութիւնը որչա՛նց էր ըստ գաւառական և մերթ ըստ նախարարական բաժանման Հայաստանի։ Անտիոն քարերուն մէջ թէև Հայաստանի քաղաքական վարչութիւնը հարուածներ և փոփոխութիւններ կրեց, ուրիշ ազգաց ձեռքանցաւ և Թագաւորական իշխանութեան հետ նախարարական տանուտէրութիւնքն ևս նուագելով սպառեցան, սակայն Հայաստանեայց եկեղեցւոյ հայրապետական տեսչութեան հետ՝ առաջնորդական տեսչութիւնքն ևս մնացին անխախտ, միայն ըստ տեղականութեան փոփոխութիւններ կրելով և ոչ ըստ էութեան։ Առաջնորդական ընդարձակ երկիրներէն շատերը նուազեցան բնակիչներէ, շատերը աւերեցան և ժողովուրդը տեղափոխութիւններ կրեց, և ըստ այնմ առաջնորդական տեսչութեան սահմանը սեղմեցաւ կամ ընդարձակեցաւ, ինչպէս որ վերջին ժամանակներս անգամ սոյն օրինակ տեղական փոփոխութիւններ եղած են և կարող են լինիլ ազգային վարչութեան և վիճակային ժողովրդի հաճութեամբ։

Սակայն թէ որքան են մեր արդի առաջնորդութիւնները, և օրինաւոր են արդեօք իրենց բաժանումները՝ թէ ոչ, առայժմ մեր ուշադրութիւնը գրաւողը այս կէտը չէ, այլ բուն առաջնորդական տեսչութեան եղանակը, վիճակը, առաջնորդի ընտրութիւնը, անձնաւորութիւնը, ժողովրդի հետ ունեցած յարաբերութիւնները, և այլն։

Հայաստանեայց եկեղեցւոյ առաջնորդական տեսչութեան եղանակը գրեթէ անորոպապէս երկու ճիւղի կը բաժնուի՝

Տաճկաստանի և Ռուսաստանի

Ռուսաստանի առաջնորդական տեսչութեան շրջանակը խիստ սահմանափակ է, վասն զի առաջնորդը քաղաքական իրողութեանց մէջ խառնուելու ամենեւեմ իրաւունք չունի և իւր ներքին վարչութիւնը կրկնավարուի կրնսխատորի (Թեմական տանի) ձեռքով, որոյ անդամներն եկեղեցական են, բաց 'ի տան'ադպրէն, որ տէրութեան պաշտօնէից կարգէն կը համարուի, ըստ որում 'այն իսկ կրնսխատորը տէրութեան պատասխանատու տեսան կը սեպուի ։ Իսկ Տաճկաստանի առաջնորդական տեսչութեան սահմանը ընդարձակ է՝ Առաջնորդը իւր ժողովրդի ամեն տեսակ շահուց և բարօրութեան համար կարող է տէրութեան քաղաքական ատեաններու ներկայանալ և խօսիլ ինչ որ պարտ է արժան է։ Այս պատճառաւ Տաճկաստանի մէջ առաջնորդը շատ մեծ նշանակութիւն ունի ժողովրդի համար ։ Ռուսաստանի մէջ առաջնորդի հաստատութիւնը կամ փոփոխութիւնը մեծ մասամբ տէրութեան ձեռքն է. իսկ Տաճկաստանի մէջ, ըստ վաղիմի սովորութեան, այս իրաւունքը ժողովրդին և ազգային վարչութեան կը պատկանի, չետեսապէս Տաճկաստանի առաջնորդական տեսչութեան եղանակը նախնական է և քրիստոնէական ։ Կեղեցւոյ տնտեսութեան ոգւոյն համապատասխան ։ Բայց գծադրարար ժամանակիս պահանջած գործնական օրինաւորութեան և կանոնաւորութեան կողմէն զուրկ և միանգամայն մեծամեծ զանցառութեց ենթակայ է ։ Չրկայ առաջնորդական կամ վիճակային ժողով և խորհուրդ չը կայառաջնորդական գործոց արձանագրութիւն ։ չրկայ առաջնորդական գործոց համարառութիւն ժողովրդի կողմէնայլ ամենայն ինչ ըստ կամ վաս զիւր

ուածի պատասխան է։ Այս անորոշ դրութեան առթիւ է, որ միայն մի լոկ նամակադրի ձեռքով առաջնորդ մի երբեմն մինչեւ երկինք կը բարձրանայ և կը շատագոյովուի և երբեմն մինչեւ գրժոխքը կ'իջնէ և կը պարսաւուի, իսկ ազգային վարչութիւնը, ըստ որում, ինքն անտեղեակ է առաջնորդի գործոցը, կըստիպուի առաջնորդական ետահակառաջնորդական յուզմունքներու մէջ երբեիլ և տատանիլ, ժողովուրդը անտէրունչ թողուլ և առաջնորդը Պօլիս կոչել, մէկ տեղէն անբաստանուածը՝ մի ուրիշ տեղ կարգել, և այսպէս շարունակ խռովութեանց և փոփոխութեանց մէջ ծփալ և տատանիլ ։ Առաջնորդական տեսչութեան այս տխուր վիճակը այսօր այնքան յայտնի է ամենուն, որ երկարօրէն նկարագրելու կարելորութի չկայ ։

Պահք ուրեմն առաջնորդական ընտրութեան մասին խօսելու ։

Առաջնորդական ընտրութիւնը գորկեղեցին միշտ ժողովրդին վերապահած է, այսօր խիստ մեծ անպատեհութեան ենթակայ է ։ Երկրորդ կամ բողոքովն չը մասնակցի առաջնորդի ընտրութեանը, և կամ կը մասնակցի բողոքովն թիւր ձանապարհաւ ։ Երկրորդէն շատերը փոխանակ բարոյական վեճ յատկութիւններ փնտռելու առաջնորդական անձի մէջ, քաղաքագիտութիւն կը փնտռեն, բայց թէ ինչ կը հասկնան քաղաքագիտութիւն ասելով, հակասութեանց հակասութիւնը այս տեղ է ։ Որանք քաղաքագիտութիւն ասելով կը հասկնան՝ բարեւելու, բարեւ տալու, նարածել շարժումներ ընելու, շատ օրներ ասելու, քանի մի լեզուներով թոթովելու և այլ այն տեսակ վարձմունքներ ։ Որանք քաղաքագիտութիւն ասելով կը հասկնան փառաւոր հազ

ուելու, ուտելու, խմելու, շատ փոքր բաւորներ և ծառաներ պահելու և այլ նմանօրինակ սովորութիւններ։ Իսկ ոմանք, որ ամենէն ցաւալին է, քաղաքագիտութիւն ասելով կը հասկընան ճարտարամտութեան, հիարագիտութեան, սուսը՝ ճշմարտի, անիրաւը՝ իրաւի տեղ փաճառելու վարպետութիւնները։ Սինչդեռ, այս կարծեցեալ քաղաքագիտութիւնները ոչ միայն փնտռելու և գովելու արժանի յատկութիւններ չեն, այլ և եկեղեցականի համար բողոքովն գառապարտուած են։

Աւստի, ժողովուրդը իրատ շատ կը շահուի, եթէ իր չիմացած և չհասկացած յատկութիւնը, որ է քաղաքագիտութիւնը, չը փնտռէ առաջնորդացու անձին վրայ, այլ նորա փոխարէն փնտռէ ժողովուրդասիրութիւն և արդարասիրութիւն, որ ինքնին կարող է ճանաչել։ Ժողովուրդը կարող է ճանաչել առաջնորդի ժողովուրդասիրութիւնը, երբ կը տեսնէ որ իր անձին համար չը հոգար առաջնորդը, այլ իր հօտին համար, երբ կը տեսնէ որ անձնանուիրաբար վիշտ և տառապանք կը կրէ ժողովուրդի իրաւունքը պաշտպանելու համար. երբ կը տեսնէ, որ որքը այրին և աղքատը հաւասարապէս կը մխիթարուին նորա հայրական խնամքով։ Ժողովուրդը կարող է առաջնորդի արդարասիրութիւնը ճանաչել, երբ կը տեսնէ, որ առաջնորդը մեծաբան և աղքատին մէջ խտրութիւն չը դնէր, այլ հաւասարապէս կը խրատէ և կը յանդիմանէ, զրկեալներուն պաշտպան կը հանդիսանայ, կաշառակերութեամբ և զօրաբաղութեամբ չը մեղանչեր իրաւանց, օրինաց և պատկառելի սովորութեանց դէմ, և այլն։ Ժողովուրդը պարտական է իմանալ, որ ժողովուրդասիրութիւնը և արդարա-

սիրութիւնը առտուել բարձր կատարելութիւններ են առաջնորդի համար, քան թէ քաղաքագիտութիւնը. վասն զի ժողովուրդասիրութիւնը մարդը դիւցազուն կ'առնէ և արդարասիրութիւնը կը յաղթանակէ ամեն կարծուած քաղաքագիտական ճարտարամտութեանց։ Առաջնորդը թող սիրէ ժողովուրդը և յարգէ ու պաշտպանէ իրաւունքը, այնուհետեւ քաղաքագիտութիւնը իրեն կը հետեւի և ոչ թէ ինքը քաղաքագիտութեան։ Ժողովուրդը կարող է բաց յայտնանէ ուրիշ աւելի տեսանելի արժանաւորութիւններ փնտռել առաջնորդացու անձին վրայ՝ դպրոցներու և եկեղեցիներու պայծառութեան նկատմամբ և մատաղ սերունդի դաստիարակութեան նոյն իսկ ժողովուրդի հոգեւոր մխիթարութեան նկատմամբ, թողունք ուրիշ քանի մի առաջնորդական յատկութիւններ եւս, որոց վրայ յետոյ պիտի խօսինք։

Վայց պիտի ասուի մեզ թէ՛ ժողովուրդն Բնչպէս կարող է առաջնորդական օրինաւոր ընտրութիւն առնել, քանի որ մեծ մասամբ իր եկեղեցական պաշտօնեայքը իրեն համար անժանօթ են։ Վաս իրաւայի է. բայց չը դիտենք թէ՛ յանցանքը որուն վերագրենք, ժողովուրդն, թէ՛ եկեղեցական վարութեան։

Արքան եպիսկոպոս և վարդապետ, որքան քահանայ և սարկաւազ կան ազգի մէջ. — ո՞վ գիտէ, ի՞նչ վարք ու բարք և ի՞նչ ուսմունք ու պարագմունք ունի իւրաքանչիւր եկեղեցական պաշտօնեայ. — ո՞վ գիտէ։ Արչափ գիւղեր կան որ առանց քահանայի են, և որ քան քահանայք և վարդապետներ կան, որ մտաբացկանութեամբ թափառական կը շրջին. — ո՞վ գիտէ։ Արքան օրինաւոր վարդապետներ կան ու բո-

վանքերու անկիւններու անյայտութե մէջ կը մնան և որչափ սնապարծ և ինքնացոյց անձինք կան : որ քաղաքներու մէջ քարոզութեան և առաջնորդութեան պաշտօններու կը հետամըտեն . — Ը՛յ գիտէ : Ը՛յ այսպէս լինելէն յետոյ՝ զարմանալի չէ ուրեմն, եթէ արժանաւոր և համեստ մարդիկ շատ անգամ յետ կը մնան , և անարժան ու ինքնացոյց անձինք յառաջ կ'անցնին և զանազան պաշտօններ ըստանձնելով ժողովուրդն ու վարչութիւնը կը յագնեցնեն :

Ըստ եթէ ամբողջ եկեղեցականաց թիւը, բարոյական և նիւթական վիճակը, որ վնասուց միաբանութեան պատկանիլը, ինչ արժանաւորութիւն ունենալը և այլ այսպիսի ծանօթութիւններ ըզգիս յայտնի լինէին : միթէ այժմեան անհաճոյ իրողութիւնները և անուանարկութիւններն ու խռովութիւններն պիտի լինէին . — Ընք չենք կարծեր, վասն զի այն ժամանակ ընտրութիւններն և գործողութիւններն գիտութեամբ կը կատարուէին և ոչ թէ այժմեան պէս անգիտութեամբ : Ընք նաևանգ այս մի կարծիքն եւս ունինք, որ եթէ ամեն առաջնորդական անձինք որ և իցէ վստիքի միաբանութեան պատկանէին և ըստ ամենայնի ապահով լինէին , որ առաջնորդութենէ ելնելէն յետոյ անշուշտ պատրաստի հաց և հագուստ պիտի ունենային , այնքան կաշառակերութեան, սիմսեակնութեան և այլ յափշտակութեանց մէջ չէին զառձանիր, այնքան ցած մտիրապաշտութեամբ չէին շարքորթեր մեծատունները և արհամարհեր ազքատը և տնանկը : արդարութեան և իրաւանց համար կը լինէին նախան ձախնդիր, տէրութեան ատենից մէջ համարձակ և պաշտօնէ հանուելու մասին անհոգ : որովհետեւ ապահով

կը լինէին : որ խաներու անկիւնները չը պիտի տառապին և ի գրուես մեծամեծաց չը պիտի գեպերին : այլ ուղի զակի իրենց միաբանական վանքը պիտի քաշուին , ուր մի կտոր հաց և սենեակ պատրաստէ իրենց համար Ընք դարեւ մենք կը հաւատանք, որ անշահասիրութիւնը արդարասիրութիւնը և այլ գեղեցիկ յատկութիւնները կը թուութեան արդիւնք են և ոչ արտաքին հանգամանքներու , բայց այն պիտի պարագաներ կան , որ տկար մարդկանց շահասիրութեան եւ անիրաւութեան պատճառ կը տան : Ընտի եկեղեցականաց և աշխարհականաց մէջ փոխադարձ սէր , յարգ , պատիւ և աջակից գործունէութիւն և ազգաշինութիւն յառաջանելու համար՝ ամեն պարագաներ գիտելու , քննելու և այնպէս տնօրինելու է :

Ընք տակաւին չըգիտենք թէ վերջիննալ Ընք համարութիւնը թիւն պայմաններ կը պարունակէ առաջնորդութեանց նկատմամբ , բայց որովհետեւ առաջնորդութիւնը խիստ կարեւոր և վստիկ ճիւղն կը համարուի մեր ըզգային վարչութեան , աւերորդ չենք գտիր մեր համոզումը յայտնել այս մասին :

Ընք արդարական տեսչութեան չըը ջանին մէջ պատահած անտեղութիւններէն ազատ մնալու համար՝ հարկ է անշուշտ . —

Ընք առաջնորդն վիճակային ժողովըրդի միաձայն հաւանութեամբ ընտրուած և առաջարկուան լինի :

Ընք առաջնորդարանին մէջ ժողովըրդի մասնակցութեամբ ընտրած ժողով լինի , թեմական գործերու վրայ առաջնորդի հետ խորհելու և տնօրինելու :

Ընք յիշեալ ժողովը իր մէջ առանձին ճիւղ կամ ուսումնական խորհուրդ քննենայ յատկապէս դատաւոր

կան կամ վիճակային դպրոցներու բարեկարգութեան և յառաջագիմութեան մասին հսկելու և

Որ երկու ժողովները առաջնորդի հետ միասին տարին միանգամ վիճակային գործառնութեանց մասին հաշիւ տան ժողովորդին և նոյն հաշիւը սղարկեն Վգգային վարչութեան և

Որ ամեն ձեռնադրութիւն ժողովորդի հաւանութեամբ և Վգգային վարչութեան պիտու թէ կատարուի :

Վեր նշանակած պայմաններէն յայտնի է, որ մեր գլխաւոր նպատակն է ամբողջնել ժողովորդի յարաբերութիւնը առաջնորդի հետ և առաջնորդի յարաբերութիւնը՝ Վգգային վարչութեան հետ, որ մեր Վկեղեցւոյ վարչական ըսկըզուների բուն արմատը է օ այս յաւանութեան մէջ կը կայանայ. և այս ընդհանուր զաւակաց սերտ միութեամբ է, որ կարացեր է դիմագրաւել շատ արհաւիրներու և փոթորիկներու և իր ժողովորդի և եկեղեցականաց զնակից գործակցութեան ու սիրոյ կապը ամրաւնայ, այնուհետեւ կը վերանան այն նորամուտ աղաղակները, որոնք վերջին ժամանակներս անխորհրդաբար կը կրկնուին թէ կղերը Վգգին կը վերանասէ, կղերը յառաջագիմութեան արգելք է, կղերը անպիտան է, և այլն և այլն : Նորամուտ անուանեցինք այս աղաղակները, որովհետեւ Հայու բընական աղաղակներ չեն, այլ Վերոպայի մէջ պապական կղերի դէմ կրկնուած աղաղակներու արձագանգն է, որ այսօր մեր Վգգին մէջ կը կրկնուի տարադէպ, Տարադէպ ասացինք, որովհետեւ մեր ազգային եկեղեցականութեան և պապական կղերականութեան մէջ ահագին անդունդ կայ : Պապական կղերը ժողովորդականութենէ արտաքոյ մի առանձին հզօր մարմին կը կազմէ և ժողովորդի դէմ կը մաքառուի իսկ Հայ ե-

կեղեցականութիւնը ուղղակի ժողովորդէն կը բխի և ժողովորդէն կախում ունի, կամ, լաւ ևս է ստել, ժողովորդի հետ մի մարմին կը կազմէ հարական և որդիական առնչութեամբ : Պապական կղերի պատմութիւնը երկար դարերէ անտի մի յարատեւ պատեւրազմ եղած է ժողովորդի զարգացման և ազատութեան և լուսաւորութեան դէմ. իսկ Հայոց մէջ համարեա թէ եկեղեցականները եղած են ուսումնասիրութեան և գրագիտութեան առաջնորդ ժողովորդին և Պապական կղերի կրթութիւնը, վարմունքը, միաձեւ համամտութեան մէջ ձուլուած է. իսկ մեր եկեղեցականներէն իւրաքանչիւրը առանձին գաղափարի և առանձին ընթացից տէր է, և հետեւապէս բոլորովին անկարող առանձին կուսակցութիւն կազմելու ժողովորդի դէմ : Աստի և մեր եկեղեցականութիւնը պապականութեան նմանեցնելը և քարկոծելը բոլորովին անտեղի է : Վթ վերջին ժամանակաց մէջ մեր եկեղեցականութեան փայլը նսեմացած է օ այս ազգային վիճակի աղէտից հետեւաւնքն է, որուն ենթակայ է նոյն քնքն ժողովուրդը : Կարճ ասելք մեր Վկեղեցւոյ ազաւոյն նայելով, (որ եկեղեցական պաշտօնէից ընտրութիւնը ժողովորդին կը վերագրէ) եթէ եկեղեցականաց մէջ, անվայել ընթացից տէր անձինք ևս կան, պատասխանատուն մենք գարձեալ ժողովուրդը կը համարենք, որ իր ընտրական պարտաւորութեան մէջ բոլորովին անհոգ է, և միայն գանգատելու և բամբասելու հակամիտ : Այս ասելով մի գուցէ կարճուի թէ մենք կուղեցնք արդարացնել սր և իցե եկեղեցականի թերութիւնը և ընթացքը բարելոցի, մենք այնչափ վեճ ժինդիք ենք այգ մասին, որ ի բոլոր սրտէ կը փոխաբէինք, որ ամեն տեղ եկեղեցականք իրենք

դատարանը իրենց անպիտան պաշտօնակցի ընթացից դէմ, եկեղեցականութիւն տն պատիւը պաշտպանէին և թերութիւնները ուղղել ջանային, որպէս զի մէկի յանցաւորութեան պատճառաւ անխորտար ամենքը չը դատապարտուէին. ինչպէս որ յաճախ կը տեսնենք ներկայ ժամանակիս մէջ:

Սենք այնպէս պիտենք, որ եթէ ժողովուրդը իր ընտրողական պարտուց՝ և եկեղեցականները իրենց վրան մ կոչման մէջ միախորհուրդ և միաբայլ ընթանային երբէք այն սառնասրտութիւնը տեղի չըպիտի ունենար, որ այսօր կարծես թէ նշմարելի կը լինի ժողովրդի և եկեղեցականաց մէջ, 'Կարձեալ կ'ասենք շեշտելով, որ եթէ ժողովրդականք և եկեղեցականք քաջ հասու լինէին իրար հետ ունեցած փոխադարձ յարաբերութեանը և պատասխանատուութեանը, երբէք, բնաւ երբէք չէին արձագանգ տար մեր Վզին մէջ այս օտաւրաձայն աղաղակները՝ թէ՛ կղերականի տան է, կղերը վնասակար է և այլն:

Թողունք այս ընդհանուր կէտերը և դարձեալ առաջնորդութեան խնդրոյն գալով խօսինք սակաւ ինչ առաջնորդի կատարելութեանց եւ պարտուց վրայ և վերջ տանք ներկայ գրուածքին:

Առաջնորդի անձը բարեգարգօղ կատարելութիւնները կամ առաքինութիւնները այսպէս կը թուարկէ Պօղոս առաքեալն՝ անարարութիւն երգութիւն, ցոփութիւն, պարկեշտութիւն, կիրարկութիւն, ոտասցլութիւն, կանարգութիւն, անընկալութիւն (1), առաջնորդութիւն, յաժարութիւն, կասար, իրիշնամբութիւն, սեր, կամբերութիւն հալածանաց և չարչարանաց (2), և մանաւանդ արկնութիւն վա-

սն բարոյութեան առետարանական բանից: Պօղոս առաքելը պատուիրած առաքինութիւնները խիստ գեղեցիկ կերպով բացատրած է մեր Շնորհալի հայրապետը իր 'Իդհանբականի այն թղթոյն մէջ, զոր ուղղած է յանուն Կառաջնորդաց: Առաջնորդական պարտաւորութեանց վրայ խօսած է յատկապէս և Վահակ Պարթև երանելի հայրապետը իր ընտիր կանոնադրութեան մէջ: Ս'ան որոյ և մենք ունին ընտիր հայրապետաց երկասիրութիւնը մտաւ նոսիշ առնելով իբրև ուսումնասիրելու գեղեցիկ նիւթ առաջնորդական պարտուց նկատմամբ՝ համառօտենք մեր ստեղծները:

Ժողովուրդը կարող է ունենալ տեսակ տեսակ վշտեր և հիւանդութիւններ: Թէ՛ մարմնական և թէ՛ հոգեկան, թէ՛ արասքին և թէ՛ ներքին, Վրտաքին վշտերն են հարստահարութիւնք, աղքատութիւնք, հիւանդութիւնք և այլ ձախտողութիւնք, որոյ պարտէք քաջ տեղեակ լինիլ առաջնորդը, որ ոչ միայն վշտակցի ժողովրդին, այլ եւ ջանայ մխիթարել, նայն վշտերուն եւ տառապանքներուն դարման և սփոփանք հայթայթելով: Ժողովրդի մէջ կարեն գտնուիլ ներքին հիւանդութիւններ, ինչպէս են մոլութիւն, ագիտութիւն, անպաշտութիւն, և գիտելութիւն և խռովութեան, և գիզկողութեան ընկերին և այլ յայն տեսակ բարոյական ախտեր, որոնք, եթէ երկար շարակին, կարող են իւր պատ պապականեղ ժողովուրդը, բարոյապետ անդամալուծել: 'Ի վերջ մեզ ցնել և անունը բաճնալ մարդկային սեռի ապագայ սերունդի պատմական աղգահամարէն: Ժողովրդի անդամոց մէջ կարող է սարդիլ կասկած թերաւ հաւատութեան, կրօնական անտարբերութեան, և յուսահատութեան, և

(1) Ա. ՅԲ. Գ. 2-3.
 (2) Բ. ՅԲ. Գ. 10-11.

քով հաւատոյ հիմունքը կը քայքայուի, և հարիւրաւոր չարիք: Կը հորդեն ՚ի կործանումն ընկերականութեան, Սուտի առաջնորդի ամենամեծ պարսքն է ժողովրդի այս ամեն ներքին հիւանդութեանը վշտակոյի և ամեն ջանք և ինամբ ՚ի գործ դնել սոյն օրինակ աստաւորութենէ ժողովուրդը սրբելու և ազատելու: Ս ասն զի այս տեսակ ակտերով փարակուած ժողովուրդը շարունակ բարոյական գերութեան մատնուած կը մնայ, և եթէ չըմարտուի, կարող չէ երբէք ճշմարիտ ազատութիւն վայելել: Ղճմարիտ կ'աներ, այն մարդը որ ժողովրդեան այս ցաւերը ոչ կը զգայ և ոչ կը ցաւի, աւել լի լաւ է որ առաջնորդութեան նուիրակն պաշտօնէն բոլորովին հեռու զտնուի և իւր անձը դատապարտութեան չըմատնէ, ինչպէս կը պատուիրէ Նիկիի. « Սթէ ամենայն եղբարցն հիւանդութիւն քեզ ոչ ցաւ է, մի լինիր առաջնորդ Գ: Ս ասն զի, առաջնորդը այն ժողովրդաւէր հոգին և զգացմունքը պիտի ունենայ, որ առանց իւր խղճէն և ժողովրդէն յանդիմանուելու՝ կարենայ համարձակ ասել. « Ս՞ որ ՚ի ձէնը հիւանդանայ և ես ոչ հիւանդանամ Գ:

Սեր առաջնորդներէն շատերը փոխանակ ժողովրդի տառապանաջը ըստ փոփանք մատուցանելու՝ նոյն իսկ ինքեանք ամեն կերպով տառապանք կը լինին ժողովրդի համար: Փոխանակ ժողովրդի հետ միանալու և արտաքին արհաւիրներուն դիմադրելու, ինքեանք ժողովրդի գէժ կը զինին և կուտակցութիւն կիրքերով կ'երկպառակեն ժողովրդի եղբայրական և քրիստոնէական միութիւնը: Շատերու անձնասիրութիւնը չը գրգռելու համար՝ չենք ուղեր ականէ յանուանէ յիշատակել ամեն բան: Բայց ՚ի հարկէ հայ լը

րագրաց ընթերցողներուն արդէն ծանօթ են վերջին քանի մը տարուան մէջ տեղի ունեցած առաջնորդական և ժողովրդական հակառակութիւնները իրենց այլանդակ հետեւ անքննելով: Ս ենք գիտենք և ականէ յանուանէ կը ձանաչենք առաջնորդական անձներ, որոնք իրենց հօտի համար իրենց անձը դնելու պատրաստ են, բայց քիտենք և այն պիտիք որոնք իրենց անձը միշտ վարձկան համարած են, միշտ անփայթ, եղած են և միշտ այլ ընդ այլ մտած և լելած են փարսխի դռնէն:

Սրգ՝ եթէ մեր Սզը վարչական մի փոփոխ պաշտօն ունի, սյն առաջնորդութիւնն է, և մեր եկեղեցական նութիւնը եթէ մի գլխաւոր միջոց ունի ժողովրդեան համակրութիւնը գրաւելու՝ դարձեալ առաջնորդութիւնն է, փան զի առաջնորդութիւնը բոլորովին ժողովրդային պաշտօն է:

Սիծը, որ կրօնական, օրագրի նըշանաբան կը կրէ, ՚ի բոլոր սրտէ կը փախարի, որ առաջնորդական վիճակները օրինաւորութեան տակ դրուին, առաջնորդները աշխատին քանիւ և գործով բարի օրինակ լինիլ հօտին, որպէս զի, շայ եկեղեցականութիւնը կարենայ օր աւուր կատարել այն նուիրակն պարտքը, որուն համար ուրտած է Ստուծոյ և մարդկան առջև, որ է Նիկեացեայ կամ Ստուծոյ Սեր դատանի մէջ յառաջանել աստուածային շնորհաց, ճշմարտութեան և մարդասիրութեան թաղաւորութիւնը:

